

„Իրավունք,, թերթի խմբագրությանը

Արագածոտնի մարզի սոցիալական աջացության տարածքային գործակալություններում Վերահսկիչ պալատի կողմից 2014-2015 թթ. հուլիսի 1-ը ընկած ժամանակաշրջանում իրականացրած ստուգումների արդյունքում աշխատանքից ազատվել են Աշտարակի եւ Թալինի ՍԱՏԳ պետերը: Միաժամանակ վերականգնվում են խախտումների հետեւանքով պատճառված վնասները:

Աշտարակի տարածաշրջանի ՍԱՏԳ-ում հայտնաբերված գումարի չափը 37 մլն. 515 հազար 500 դրամ է: Վերականգնման ենթակա է 3 միլիոն 757 հազար 500 դրամը, որից 23.05.2016թ. դրությամբ վերականգնվել է 3 մլն. 317 հազար 500 դրամ:

Արագածի տարածաշրջանի ՍԱՏԳ-ում հայտնաբերված գումարի չափը 8 մլն. 960 հազար 500 դրամ է: Վերականգնման ենթակա է 1 միլիոն 513 հազար դրամը, որից 23.05.2016թ. դրությամբ վերականգնվել է 1 մլն. 194 հազար դրամ:

Ապարանի տարածաշրջանի ՍԱՏԳ-ում հայտնաբերված գումարի չափը 6 մլն. 290 հազար դրամ է: Վերականգնման ենթակա է 587 հազար դրամ, որից վերականգնվել է 427 հազար դրամ:

Թալինի տարածաշրջանի ՍԱՏԳ-ում հայտնաբերված գումարի չափը 9 միլիոն 991 հազար դրամ է: Վերականգնման ենթակա է 275 հազար դրամ, որն ամբողջությամբ վերականգնվել է:

Մնացած գումարները աջակցության խորհրդի որոշմամբ վերականգնման ենթակա չեն: Վերականգնման ենթակա գումարների ետգանձման գործընթացը կշարունակվի մինչեւ 2016թ. հոկտեմբերի 1-ը:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

